# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 17 դեկտեմբերի 2020թ.-ին կնքված N «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի

ք.Երևան «18» հունվարի 2021թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Դանիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից՝ հիմք ընդունելով ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.17թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2021թ. պետական բյուջեով հատկացվել է 6 679 900 (վեց միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը և վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ |
| Հանրապետության հրապարակ, | ք. Երևան Պուշկինի 1 |
| Կառավարական տուն 1 | ՀՎՀՀ 02665864 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024040 | Հ/Հ 1660006430550100 |
| ՀՎՀՀ 02505554 | |
| ------------------------------ | ------------------------------ |
| | Տնօրեն՝ Ա. Դանիելյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*«17 » դեկտեմբերի 2020թ. կնքված*
*ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի*
*« 18 » հունվարի 2021թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը* |
| 1 | 09132100/502 | Բենզին պրեմիում | ԱՎՏՈԲԵՆԶԻՆ АИ-95-К5, АИ-95-К5, ՌԴ «ԼՈՒԿՈՒԼ» ՀԲԸ | Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ$^3$-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը՝ 15 °C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ$^3$, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»: Մատակարարումը՝ կտրոններով:<br>• Ապրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է.<br>Կտրոններն ուժի մեջ պետք է լինեն մատակարարման օրվան հաջորդող առնվազն 14 ամսվա ընթացքում և դրանք պետք է սպասարկվեն ք. Երևանում (առնվազն 10 բենզալցակայան, որից առնվազն մեկը Կենտրոն վարչական շրջանում), ՀՀ բոլոր մարզկենտրոններում: | լիտր | 313 | 719900 | 2300 | ք. Երևան, Կորյունի 15 | 2300 | Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո 25-րդ օրը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 09132200/507 | Բենզին ռեգուլյար | ԱՎՏՈԲԵՆԶԻՆ АИ-95-К5, АИ-95-К5, ՈՒ «ԼՈՒԿՈՒԼ» ՀԲԸ | Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 150C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 % անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»: Մատակարարումը կտրոնային:<br>• Ապրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է.<br>• Կտրոններն ուժի մեջ պետք է լինեն մատակարարման օրվան հաջորդող առնվազն 14 ամսվա ընթացքում և դրանք պետք է սպասարկվեն ք. Երևանում (առնվազն 10 բենզալցակայան, որից առնվազն մեկը Կենտրոն վարչական շրջանում), ՀՀ բոլոր մարզկենտրոններում: | լիտր | 298 | 5960000 | 20000 | ք. Երևան, Կորյունի 15 | 20000 | Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո 25-րդ օրը |

* Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է 25 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ,<br>Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024040<br>ՀՎՀՀ 02505554<br>______________________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ<br>ք. Երևան Պուշկինի 1<br>ՀՎՀՀ 02665864<br>«Էվոկաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1660006430550100<br>______________________<br>Տնօրեն Ա. Դանիելյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված թիվ 2
«17 » դեկտեմբերի 2020թ. կնքված
ՎԱՐՏ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի
« 18 » հունվարի 2021թ. կնքված N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132100/502 | Բենզին պրեմիում | - | 719900 | 719900 | 719900 | 719900 | 719900 | 719900 | 719900 | 719900 | 719900 | 719900 | 719900 | **719900** |
| 2 | 09132200/507 | Բենզին ռեգուլյար | - | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | 5960000 | **5960000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
ք. Երևան Պուշկինի 1
ՀՎՀՀ 02665864
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660006430550100

Տնօրեն Վ. Դանիելյան
(ստորագրություն)
Կ.Տ.